342

1. Պանդուխտներ ենք թափառական
Եվ հոս՝ օտար, և հոս՝ օտար,
Աշխարհ մեզի երբեք հանգիստ
Չխոստանար, չխոստանար:
Երկնքի մեջ լոկ կա ցնծում,
Խաղաղություն, խաղաղություն,
Հոգով բեղուն, հավետ պայծառ,
Հավետ սիրուն, հավետ սիրուն:

Հոն է մեր տուն, հոն է մեր տուն,
Տունը մեր՝ վեհ ու մնայուն,
Հոն է մեր տուն, հոն է մեր տուն՝
Հավետ պայծառ, հավետ սիրուն:

2. Հոն է մեր տուն, ուր կմեկնին
Սուրբերն համայն, սուրբերն համայն,
Ուր կկազմին մեկ ընտանիք
Արքունական, արքունական:
Ազատ ամեն չարյաց դաժան
Նետերեն բյուր, նետերեն բյուր,
Հոն, ուր Կենաց գետ կհոսի
Վճիտ, մաքուր (2):

3. Հոն է մեր տուն, ուր ոսկեղեն
Քաղաքն ամբողջ, քաղաքն ամբողջ
Կշողշողա Մեծ Արքային
Սիրովն անվերջ, սիրովն անվերջ:
Ուր սերովբեք անդուլ կերգեն
Զմայլահար, զմայլահար՝
Ի տես անբիծ, անեղծ հարսին
Հմայքն անճառ, հմայքն անճառ:

4. Հոն է մեր տուն՝ անշարժ վեմին
Վրա հաստատուն, վրա հաստատուն,
Հոն, ուր բնավ խոնջանք չկա
Ընտրյալ մարդուն, ընտրյալ մարդուն:
Ուր բնության ակունքներեն
Բխի բերկրանք, բխի բերկրանք,
Ու պաշտվի Բարձրյալ Աստված
Հոգով համակ, հոգով համակ:

5. Երկինքն է մեր հայրենիքը,
Հազար դրախտ, հազար դրախտ,
Հազար երանգ, ծառ ու ծաղկունք
Եդեմազարդ, եդեմազարդ:
Բյուր թռչնոց ու հրեշտակաց հետ
Տալով ողջույն, տալով ողջույն,
Կգեղգեղեն անմահությունը
Սուրբերուն, սուրբերուն:
Վերն է մեր տուն, վերն է մեր տուն,
Տունը մեր՝ վեհ ու մնայուն,
Վերն է մեր տուն, վերն է մեր տուն,
Հավետ պայծառ, հավետ սիրուն: